ՆՈՐ-ԴԱՐ

№ 179 ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 9 Հոկտեմբերի 1896 Շաբաթ 9 Հոկտեմբերի ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 179

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների դառին 2 կ., բիկամների համար կրկնապատիկ

„Նոր-Դար“-ի խմբագրութիւնը իւր նախկին բնակարանից տեղափոխուել է Մուսխելովի տունը, որը գտնւում է Լոռիս-Մելիքեան փողոցի վրայ, № 19, պոստ-հեռագրատան շինութիւնից մի քիչ բարձր հանդիպակաց կողմը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդ.—Մամուլին ծառայել։
Գառակոծումն անգլիական ազատամիտ կուսակցութեան մէջ։
Դաղտնի խորհրդական Ա. Ն. Մուսխելովի և իշխան Է. Է. Ուխտոմսկու այցելութիւնը։
Քրոնիկոն.—Դաղթականութիւն Ռուսաց արտաքին գործերի մինիստր։ Ս. Խաչ վանքի վանահօր հրաժարականը։ Ս. Թադէի առաքելոյ վանքի վերել և տեսուչ։ Նոր կանոն նաւերի համար։ Մաքրնեան դպրոց Նախարադում։ Սև ծովի ափերի բնակիչների կարիքները։ Քաղ. վարչ. անդամի ընտր.։ Դիմնազիոն Բաթումում։ Ռուսաց եկեղեցիներ։ Առագումն Թուրքաստանում։ Համառուսական մարդահամար։ Աիսալքալաքից։ Ջուշուց։ Ալէքսանդրապոլի քաղաքագլխի ընտրութեան խրդիրը։
Մամուլի չարչը։
Դեղարուեստ և գրականութիւն։
Մատենախօսութիւն։
Քաղաքական.—Թրքական գործեր։
Բանասիրական.—Թէ ինչպէս է մարդը կերթում կնոջը։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 8-ն հոկտ. 1896 թ.

ՄԱՄՈՒԼԻՆ ԾԱՌԱՑԵԼ

Ի՞նչ է նշանակում մամուլին ծառայել։

Դա մի վեհ առաքելութիւն է, ուր ամբ կոխողն ուխտում է հատարակութեանը, ժողովրդին ծառայել։ Մի ջահ է, որի ճառագայթները լմփվանցում են և լուսաւորում հեռաւոր ու մութ անկիւններ։ Մի պատմութեան ասում է թէ «Վոլտէրի արժանաւորութիւնը նրանումն էր, որ նա լոյս է սփռել ամենուրէք՝ բոլորած բարձրաստիճան դասակարգերից մինչև իսկ Ֆրանսիայի վաճառականների, արհեստաւորների և կէս գրագէտ գիւղացիների համեստ բնակարանների մէջ»։ Անա այս համաշխարհային փիլիսոփայի տարածած լուսին կարող ենք նմանեցնել մամուլի լուսաւորութիւնը։ Մամուլը պանդանութիւն չի գնում հարստի և աղքատի, բարձր ու հասարակ դասակարգի մէջ, նա հաւասարապէս է բաժանում իւր լոյսը. նրա ձայնը հաւասար ուժով է հընչում ամենքի վերաբերեալ։ Նա բարձրը է ամեն տեսակ կոմինապետութիւնից, իշխող և առաջնորդող դիրք ունի նա։

Մամուլը լուսաւորելով խօսքերս մեր կեանքի մասին, մերև առածներս կարող են վերաբերել մասամբ պարբերական մամուլին։ Առհասարակ պրբքերը դեռ շատ սահմանափակ թուով ընթերցողներ ունին, ուրեմն և նրանց ազդեցութիւնն էլ չնչին պէտք է լինի։ Պարբերական հրատարակութիւններն են որ էլի կարդացւում են մեր մէջ, նրանք են, որ էլի մեծ ուժն են թէ մեր գիւղերում և թէ քաղաքներում. ուրեմն և նրանք են պէտք, որ պէտք է մեր յիշած կրակը, լոյսը տարածեն մեր հասարակութեան, մեր ժողովրդի մէջ։

Որքան որ միջոցները նեղում են, մեր պարբերական մամուլը ծառայում է այդ կոչմանը։ Բայց շատերն արդիօք մասն ունեն այդ ծառայութեան մէջ, շատերն են, որ օգնութեան ձեռք են կարկառում լուսաւորութեան այդ գործօնին, շատերն են արդիօք նուիրում իրենց պարբերական մամուլի ծառայութեանը բարոյապէս և նիւթականապէս։

Մենք լ նկատի չունենք «մամուլի մշակներին», որոնք այսպէս ասած լ պաշտօնէ ծառայում են պարբերական մամուլին. այլ մեր խօսքը վերաբերում է այնպիսիներին, որոնք պէտք է մամուլին, իբրև մի հասարակական գործի ծառայէին։ Սակայն դժբաղդաբար այդպիսիների թիւը սահմանափակ է։ Քչերն են, որոնք իրենց ազատ ժամանակը նուիրում են մամուլի միջոցով այս կամ այն հարցը պարզելու, այս ինչ կամ այն ինչ առաջարկութեան արձագանք տալու և պարբերաբար լրղթակցելու, աշխատակցելու և այլն։

Մենք գիտենք, որ հայերից շատերը քաղաքների իրաւաստներ են, պատուաւոր դատաւորներ են, տպարարձակներ և այլն և այլն, նրանք չքնաղ կրում են այս կամ այն հասարակական պաշտօնը։

Բայց մեծ պարբերական մամուլին ծառայելը հասարակական պաշտօն չէ. մեծ հասկանալի չէ, որ տպագրական խօսքի տպարէզը շատ աւելի բարձր տպարէզ է ժողովրդի նիւթական, մտաւոր և բարոյական յառաջադիմութեան ծառայելու. մեծ անհասկանալի է, որ մամուլն այն ամրիծն է, որի վրայ բարձրացողը ժողովրդի ամբողջութեան հետ գործ ունի. նա մի բարձրութիւն է, որտեղից լոյս կարող է սփռել գործողը, ճանապարհ ցոյ տալ, նախատել, խրատել, յորդորել և վէրքերն էլ լուանալ։

Պարբերական մամուլի գործունէութիւնը, մանաւանդ մեր մէջ, մի հասարակական վար ու ցանք է. որքան շատ մարդ աշխատի այդ անպատասխանում, այնքան աւելի առատ հունձ կրտսացուի, եթէ լ հարկէ բնութեան չար պատահարները չխանգարեն նրա կանոնաւոր աճելութիւնը։

ՊԱՌԱԿՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԻՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մենք առաջ բերինք լորդ Ռոզբերու Էդինբուրգում խօսած ճառը, որի մէջ նա բացատրում էր այն պատճառները, որոնք հարկադրել էին իրեն հրաժարուել անգլիական ազատամիտ կուսակցութեան ղեկավարութիւնից։

Ճառախօսի խօսքերից մեռում է եզրակացնել, — ասում է «Պրատ. Վեստ.»-ը որ Ռոզբերու հայեացքները էականապէս տարբերւում են ազատամիտ կուսակցութեան բուռւար մեծամասնութեան հայեացքներից Անգլիայի յարաբերութեան մասին գէպի թրքական խնդիրը։

Մինչև այժմ յայտնի են բրիտանական ազատամիտների բանակի երեք ամենապլատար ներկայացուցիչների հայեացքները արեւելեան խնդրի վերաբերմամբ։ Այդ երեք ներկայացուցիչներն են Գլադստոնը, սեր Ուիլիամ Հարկորտը և լորդ Ռոզբերին, որոնք երեքն էլ վերջին օրերս հրատարակ եղան իրենց

— Մեր տղէքը։

Տէրտէրակինը, որ ամուսնու հետ նոյնպէս դուրս էր եկել, լսելով այդ՝ յօնքերը սաստիկ վրայ բերեց և հէնց այն է, ուզում էր բերանը բանալ մի լաւ նախատել Ծերունի Ադամին, որ համարձակուել էր իրեն խարել և սուտ խօսելով տէրտէրին քնիցը զարթեցնել տուել, բայց ամուսնու ներկայութիւնից քաշուելով խոժոռ հայեացքով նայեց Ծերունու երեսին և քթի տակ ինքն իրեն փնթփնթաց. «Սպասիր դու. մէկ էլ կըգաս տէր-տէր կըկանչես. ցերեկ հանգիստ չունինք, գիշերը հանգիստ չունինք. ամեն մի ապուռ-ճուպուռ բանի համար «տէր-տէր»։ Տէր Աստուած, քաղաքում էլ ուրիշ տէր-տէր էլ կայ, թէ մենակ իմ ամուսինն է...» և գնաց նեղս։

—Դրա համար էլ մարդու գիշերով անհանգստացնեն, ախպէրս, ձեզ քանի անգամ ասել եմ, որ եթէ մէկ էլ գիշերը կուտին՝ ինձ մի զարթեցնէք։

— Տէր-տէր Ջան, ինչ անեմ, ոտքդ պագնեմ, ներող եղիր, դու մեր տէրն ես, էլ ում դիմենք. մենք էլ գիտենք, որ մեր արածն անքաղաքավարի բան է, համա ինչ անեմ, ինչ ձիուն տամ գլխիս... Իրաւ Ջարդեցին ոչ էն խօսք կըհասկնայ, ոչ էն. էլ մազ ու մրուք չթողին փետեցին, էլ հօր գանգ ու կող չթողին իրաւ խառնեցին. էլ գագանակ ու ասան չմնաց, մէկդան բերին, էլ դուռ ու գրկից չմնաց, գլխներիս հաւաքեցին։ Վայ բիլաքիմ ախ ըլլին գրանք, մեզ էլ խայտառակեցին, իրենց էլ։

Քահանան այլևս չխօսեց, վերարկուն անձը գցեց և գնաց։

— Ադամ ախպէր, ախր գրանց գարդն ինչ է ինչ ունին իրաւ մէջ բաժանելու, որ տարին-տասներկու ամիս կուտմեն, չլինի մի էնպէս բան կայ...—ճանապարհին հարցրեց քահանան։

— Ես էլ չգիտեմ, տէր-տէր Ջան, թէ պատճառն ինչ է գրանց կուտի, ես էլ շաշմել մնացել եմ. մէջ տեղը մի բան չկայ, իմ էլ խելքս չի հասնի։ Առաջ որ պահուեցան մեր տանն էին, հօյա չգնացին. հարսս կուտմ էր, թէ, Աս տուած ողորմի նրա էլ հոգուն, կեսուրս մարդուս իրաւ է տալիս, վրէս վեր է վարում, վերջն էլ կանգնեց, թէ հս էստեղ չեմ մնայ. ես կերթամ մարանցս։ Տեսանք որ չի լինիլ, ուղարկեցինք իրեն էլ, մանչուս էլ մարանցը։ Էնտեղ էլ տղէս սկսեց, թէ «զոքանչս կնոջս բաները է իրաւ տալիս... ես աղամարդ լինիմ, ու կնկայ պէս գլխիս լաչակ ծածկած աներանցս տուն հարս գնամ. ա-

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐ Ա. Ե. ՍՈՍԼՈՎԿԻՆ
ԲԱ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Ե. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՈՒԹԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ծանոթ. 14-ին՝ շաբաթ օրը Կեսարիոյ հայոց առաջնորդարանին մէջ տեղի պիտի ունենայ ամառնային ընդհանուր ժողով մը, որուն պիտի մասնակցին նաեւ Ամերիկայի հայ հոգեւորականներ։ Ս. Ե. Ժողովոյն ներկայացուցիչ Տօքթ. Նորայր Պէյ ալ պիտի գտնուի հոն։

ՀԱՅԿԱԶ.—Մեսխտիների 25-ին Մ[illegible]-Հաշ-օղլի անունով մի հոյակապ տուն է կառուցվել, որ ունի 650 քառ. ֆաթոմ մակերես։ Տունը շինելու համար ծախսվել է 20 հազար ռուբլի։ Այդ տունը պատկանում է մի հարուստ մեսխեցու, որ ապրում է Ռուսաստանում։

—«Նոր-Դար»-ի 170 №-ում գրել էինք, որ Ռուսաստանի մի քանի նավթարդյունաբերական ընկերություններ որոշել են ստեղծել մի ընդհանուր ընկերություն, որ կոչվելու է «Նավթային միություն»։ Այդ ընկերության կապիտալը կազմելու է 20 միլիոն ռուբլի։ Ընկերության գործունեության ասպարեզ կլինի Բաքուն, Գրոզնին և Մայկոպը։ Ընկերության նպատակն է՝ ամբողջ նավթարդյունաբերությունը իր ձեռքում կենտրոնացնել, որպեսզի կարողանա նավթի գները իր կամքի համեմատ որոշել։ Ընկերության կազմակերպիչներն են Նոբելները, Ռոտշիլդները և ուրիշներ։

Ինչպես հայտնի է, Ռուսաստանում նավթի գները շատ ցածր են։ Ընկերության կազմակերպիչները հույս ունեն, որ նավթի գները կբարձրանան, երբ ընկերությունը կստեղծվի

վաստակները է թողել նա, որոնց մէջ Կռիլովի առակների թարգմանութիւնը մի չատ պատկառելի տեղ է բռնում։

Ամեն ազգի մէջ էլ թարգմանական աշխատասիրութիւնը գրականութեան նպաստող և զարգացնող աղբիւրներից մէկն է, մանաւանդ մեզ նման փոքր ազգերի համար, որ ամեն ճիւղ զարգացնում ենք օրինակով և նմանողութեամբ, ուստի և որքան ընտիր լինի թարգմանական օրինակը, աղբիւրը, այնքան էլ աւելի հարազատ կըլինի նմանողութիւնը։

Թարգմանական գրականութեան մէջ էլ երկու որոշ մասեր կան, որոնք տարբեր էլ ընդունակութիւն են պահանջում թարգմանչից. մինչդեռ արձակ գրուածքների համար հարկաւոր է ճշտութիւն և արտայայտութիւնների պարզութիւն, բանաստեղծական գրուածքները թարգմանելու համար անհրաժեշտ է բանաստեղծական ձիրք, որովհետև այդպիսի երկերը թարգմանելիս բովանդակութիւնը ճշտօրէն թարգմանելուց զատ, պէտք է թարգմանել հաւատարիմ կերպով նաև բանաստեղծի զգացմունքները, աւիւնը և պատկերաւորութիւնները, իսկ այդ կարող է անել միայն բանաստեղծը, որովհետև այդպիսի թարգմանութիւնը արդէն մի տեսակ ստեղծագործութիւն է կամ աւելի ճիշտն ասած վերաստեղծումն է։ Ցիշեցնս հաւատարիմ թարգմանութեան որպէս օրինակներ, ռուսաց գրականութեան մէջ ճանաչում են Ժուկովսկու թարգմանութիւնները, իսկ մեր մէջ Ն. Այվազովսկու Կռիլովի առակների թարգմանութիւնը, որովհետև դրանք կրում են պահանջուած ինքնուրոյն կնիքը։

Որքան էլ որ պատասխանատու գործ է բանաստեղծական երկերի թարգմանութիւնը, չատ աւելի գժուար թարգմանելու են այդ կարգի հեղինակութիւնների մէջ առակները, որովհետև առակախօսը կարճ բայց իմաստալից նախադասութիւնները, համառօտ բայց խորհրդաւոր խօսակցութիւններն արտայայտելու համար գործ է ածում լեզուի ամբողջ ոյժը, պատկերաւորութիւնը և սրութիւնը։ Ի նկատի առնելով և այս հանգամանքն աւելի և աւելի բարձրանում է Կռիլովի առակների թարգմանութեան նշանակութիւնը, որովհետև թարգմանիչը կատարելապէս յաղթել է այդ ամեն գժուարութիւնները։ Թարգմանութիւնը կատարել է Տաճկաստանի հայոց աշխարհիկ բարբառով, բայց միևնոյն ժամանակ քաղելով զանազան բարբառներից գեղ է և գործածել այնպիսի արտայայտութիւններ, ձեւեր, սրբութիւններ և անուններ, որ ուսս առակախօսի տաղանդը անաղարտ կարողացել է հաղորդել մեզ նրա առակների գեղեցկագոյն թարգմանութեամբ։ Առակներից չատերի թարգմանութիւնը, ոչ միայն հարազատ և ինքնուրոյն կարելի է անուանել, այլ մինչև անգամ բնագրից էլ գերազանց, ինչպէս օրինակ «Թաթուլին գալաճօշը» («Демьянова уха»), «Դաշնակութիւն քառաձայն,(«Квартетъ») «Փիղ և քաթոթ» («Слонъ и Моська») «Եզ և գորտ» («Волъ и Лягушка»), «Կապիկ և ակնոց» («Мартышка и очки») և այլն։ Կարդալով այս առակների թարգմանութիւնը, ընթերցողը զգում է թարգմանչի գրած հետևալ տողերի ճշմարտութիւնը. «Թէ տեղ տեղ հեղինակին իմաստը մեր աշխարհաբարին վերածուած ժամանակը կարծես թէ աւելի դեղեցկութիւն առած է»։

Թարգմանութեան երկրորդ տպագրութեանը կցուած է Պլեհակովի կազմած Կռիլովի կենսագրութեան թարգմանութիւնը և իր թարգմանչի բուսական ընդարձակ կենսագրութիւնը, որը քաղուածօրէն կազմել է պ. Ն. Քարամեանը։ Գրքի գինը 80 կոպ. է։

Մենք վերջացնում ենք մեր խօսքը կրկնելով, որ այսպիսի թարգմանութիւններն ինչպէս ամեն գրականութեան, այնպէս էլ մեր ազգաս գրականութեան համար կարող են գանձ համարուել։

Գ. Հ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Կ. Պոլսից գաղթող հայերի Ցիւր, լրագրերի ասելով, հասնում է 16,000 ի (տասնվեց հազարի)։

—

Թիւրքիայի գահաժառանգի նշանակութիւնը։ «Frankfurter Zeitung»ը մի լիստ տաբօրինակ լուր է հաղորդում. նրա ասելով սուլթանի որդին, Թիւրքիայի գահաժառանգը նշանակում է Բաւարիայի պրինցեսս Ազնէզունդայի հետ։

—

Քրդական հեծելապետները, ինչպէս հաղորդում են Կ. Պոլսից, տեղափոխուած է իւր հայրենիքը, որովհետև նա վատ անուն է եղել հանած Կ. Պոլսի բնակիչների մէջ։

—

Կ. Պոլսից հասնող տեղեկութիւնները հազար դոյն ունին և խիստ անորոշ են։ «Temps»-ին հաղորդում են, թէ յոյլ առ յոյլ Վօսփորի ափերին մեծ պետութիւնների կողմից նշանաւոր վճռների են սպասում արևելեան խնդրի վերաբերմամբ։ Այնտեղի թղթակիցներն իրենց թերթերի խմբագրութիւններին նախազգուշացնում են նշանակութիւն չտալ Եւրոպայում տարածուած լուրերին, որոնք մեծ մասամբ հիմնուած են ինչպէս հանգստացուցիչ, այնպէս և երկիւղալի տեղեկութիւններ հաղորդողների անձնական հայեացքների և պիտաւորութիւնների վրայ։ «Times» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ մինիստրների խորհուրդը իւր վերջին նիստում զբաղուած էր բացառապէս Թիւրքիայից փախած հայերի գոյքերի գրաւման խնդրով և որոշեց հարուստ հայերից պահանջել վերջին արիւնահեղ անցքերից հետոպատահների կրած վնասների հատուցումը։ Կ. Պոլսում այժմ, ըստ երևոյթին, չեն էլ մտածում հաշտուելու խռով սրտ հայերի հետ մեծ պետութիւնների առաջարկած ռեֆորմները մտցնելով, այլ Ելդըզ-Քիօշկում բոլոր ուշադրութիւնն կեդրոնացած է հայերի մէջ կատարուող ձերբակալութիւնների վրայ։ Միևնոյն ժամանակ Կ. Պոլսից այնպիսի փաստեր են հաղորդում, որոնք մի տեսակ ցոյց են տալիս, թէ վերջին կոտորածների պատճառները քննող բարձրագոյն յանձնաժողովը հաստատ վճռել է հանգամանօրէն տեղեկանալ բոլոր բաներին և լոյս աշխարհ բերել Կ. Պոլսի կոտորածի բուն հեղինակներին, որոնք թագնուած են։ «Frankfurter Zeitung»ին հետագրում են, որ այս օրերս մեծ կռիւ է տեղի ունեցել սուլթանական պալատում սուլթանի սենեկապետ Իզէտ-բէյի և վերջին անցքերը քննող յանձնաժողովի անդամ եւրոպացի փաշաների միջև։ Հաստատ աղբիւրից հաղորդում են, որ Իզէտ-բէյը պնդում էր, որ յանձնաժողովն ընդունի իւր առաջարկած թուղթը և այս անգամ նա ուղղակի սպառնալիքներ էր կարդում։ Բայց Կամպհեօվներ-փաշան անդրդուելի էր մնում, և յանձնաժողովի մի ուրիշ անդամ, Ֆրանսիացի Լեկոկ-փաշան, անպայման միացաւ նախագահի հետ։ Միւս անդամները ձեռնպահ մնացին։ Բայց և այնպէս Ելդըզ-Քիօշկին մօտիկ եղող քաղաքական շրջաններում կարծում են, որ այս միջնադէպից յետոյ Իզէտ-բէյի դրութիւնն անխուսափելի կերպով կըխախտուի։

—

Միեւնոյն բարձրագոյն յանձնաժողովի մէջ ծագած տարաձայնութիւնների մասին ուրիշ աղբիւրից հետևեալն է հաղորդուում։ Յանձնաժողովի անդամ անգլիացի Բլեմփաշայի առաջարկութեամբ յանձնաժողովը պահանջեց, որ դատ բացուի Հաջէօի ժանդարմերիայի կառավարիչ Համիտ-բէյի դէմ, որ, ինչպէս ցոյց են տուել վկաները, իւր սեպհական ձեռքով սպանել էր մի քանի հայերի։ Պահանջում էր նմանապէս գատական պատասխանատուութեան ենթարկել ժանդարմական մայոր Օսման բէյի դէմ, որն ոչ թէ միայն թոյլ էր տուել, որ իւր իշխանութեան տակ գտնուած ժանդարմները ջարդեն իրենց բռնած հայերին, այլ և մինչև անգամ այդ մասին չէր տեղեկացրել իւր իշխանութեանը։

Պատասխանատու խմբագրի՝
ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ
Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնս յիշեցնում է իրենց պարտքը նրանց՝ որոնց մօտ խմբագրութեան հասանելի գումարներ կան եւ որոնց վրայ ապառիկներ են մնում։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Съ разрѣшенія начальства
ЗА 5 РУБЛЕЙ
въ мѣсяцъ бывш. студентъ, со званіемъ учителя и аттестатомъ зрѣлости, приготовляетъ въ 1 й классъ и въ остальные и на полное содержаніе—по соглашенію. Видѣть только отъ 4-хъ до 6 час. въ будни. Адресъ постоянный: Михайловская улица, домъ Алерціани, № 47, по серединѣ двора, бѣлый балконъ, направо
(671) 10—10

Удостоившееся награды національной академіи земледѣлія, промышленности и торговли въ Парижѣ,
Письменное преподаваніе двойной бухгалтеріи на русскомъ и нѣмецк. языкахъ, вполнѣ замѣняющее устное преподаваніе. Масса благ. и отличн. отзывовъ. Окончившимъ, по желанію, выдаются удостовѣренія объ изученіи предмета подъ моимъ руководствомъ. Преподаватель бухгалтеріи членъ національной академіи земледѣлія, промышленности и торговли въ Парижѣ,
А. Н. ЯНКОВСКІЙ
ВЪ РИГѢ.
Условія и подробныя письма высылаются безплатно
Предостерегаю отъ подражаній.
Полная гарантія успѣха. Плата умѣренная.
(М.) 10—10

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԼԻԹԻ ՀԱՅՈՑ ՎԻԱՐ
ԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻՈՅԻ Առանի մէջ նշանակուած ԱՃՈՒՐԴ սոյն հոկտեմբեր ամսի 14-ին առանց կրկնաճրպի կայլոյ տալու Գուկիսյ Նալբանդեան եկեղեցու կալուածներն (կրպակներ այլն), որոնք պատկանում են նոյն եկեղեցու չուրջը։
Անդամ կոնսիստորիայի՝ Համազասպ վարդապետ։
(668) 2—1

ԲԱԳՈՒ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Ա. ԲԱԲԱԼԵԱՆԻ
Ներկայիս ստանալով սկզբնական կրթութիւն, պատրաստուում են մի նպակաւոր դպրոցները մանելու համար։ Ընդունելութիւնը առաւօտեան 9 – 2 ժամը։ Հին-փոստի փողոց, տուն Հայկ-Նէյմանի։
(667) 2—2

Առաջիկայ 1897 Թուականից կըհրատարակուի Նոր-Նախիջևանում
„ԳՈՐԾ“
ԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
Երկու գրքի բաժանորդագինն է Ռուսիայում 3 րուբլի, արտասահմանի համար—10 ֆրանկ։ Իւրաքանչիւր գիրքը առանձին կարժենայ 2 րուբլի։ Բաժանորդագրութեան համար պէտք էդիմել՝ Нахичевань на Дону, въ редакцію сборника „Горцъ“, *իսկարտասահմանից—*Nakhitgevan sur le Don, Rédaction de la Revue «Gorz»
Խմբագիր-հրատարակիչ ԵՐՈՒԱՆԴ ՉԱՀԱԶԻԶ
(փ.) 5—5

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակում և գրավաճառանոցներում վաճառւում են ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները

82	Ձիլիօնի կալանաւորը, Մ. Հարամանի, Ի. Կ. Դիլնազարեան	— 60
83	Համլէտ Շէքսպիրի, Թ. անգ. Յով. խան Մասէհեանի	— 75
84—87	Քննական պատմ. հայոց, Ա. Մ. Դարպասչեանի չորս հատ	4 —
88	Պատմ. հայոց, բ. տպ. Ս. Պալասանեանի	1 50
89	Ակնոյ հնութիւնք, Յ. Ձանիկեանի	2 —
90	Ուրբինօեցի մանուկը, Ույդի զրույցներից	— 10
91	Կօշկակար երաժիշտ, Տիւշեվի	— 5
92	Խնձորենիների երկրում, Ույդի զրույցներից,	— 10
93	Երկու եղբայր, հեղ. տիկ. Մօնղօմերի Թարգմ. Գ. Գ.	— 60
94	Մեծապ. Մուրաց., գ. տպ. Յ. Պարոնեանի.	— 40
95	Նախագիտելիք բուսաբանութ. Ա. Քիշմիշեանի	— 80
96	Հազարից մէկը, Ն. Մամիկոնեանի.	— 60
97	Ինչպէս կուզէք, Շէքսպիրի. Թ. Յ. խան Մասէհեանի	— 50
98	Դպրոցական առողջապահ. բժ. Վ. Արծրունի	— 50
99	Կեղեքիչ. վէպ Վ. Ի. Նեմիրովիչ—Դանչենկոյի	— 10
100	Գառող արմաւենի,	
102	Գառող Ագռվն,	Վ. Գարշինի, Թարգմ. Հ. Ա- — 5
103	Ձանապարհորդ կոտրը,	ռաքելեան. — 3
104	Մանկական լօտօ, պատկերներով	1 20
105	Գետնափորի երեխան. Թ. Շիրվանզադէ	— 15
106	Վրէժ, Դիւի գը-Մօպասանի, Թ. Լ. Մ. Ադամեանի.	— 5
107	Ակամայ մարգասպան, Թարգմ. Տ. Յովհաննիսեանի	— 15
108	Մուֆլու. Ույդի, Թարգմ. Յ. Օհանեանի.	— 10
109	Անեղեռնագործ.	— 7
110	Նապաստակ, Սլիվիցկու Թարգմ. օր. Ն. Ղուլիջանեան	— 7
111	Երբունի Մարիօն, Իւրիյ Եակիչի. Թ արգ. Մելիքիեանի	— 10
112	Ռոմէօ և Ջուլիէտ, Շէքսպիրի, Թ. անգ. Յ. խան Մասէհեանի	— 60

(448) 16—12

լոյս տեսաւ
ՍՐԿ. Ց. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ
„ՄՈՒՏՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ“
ԵՐՐՈՐԴ ՏԻՐՔ
Վաճառւում է բացառապէս «Կենդրոնական գրավաճառանոցում» և հեղինակի մօտ

Ա. գիրքը	(173 երես) արժէ 60 կ.		
Բ. »	244 » » 50 »	Ա. և Բ. միասին	1 ր.
Գ.	173 » » 40 »	Երեքը 590 եր.	1 ր. 25 կոպ.

Յարգելի հայ ուսուցիչներին, ուսումնասէր աշակերտներին և աշակերտուհիներին կըզիջինք 30% մեզ գիմած դէպքում միայն։ Գումարով գնողներին դիմումն կըլինի։
Ապառիկ կամ առանց վերադիր (безъ налож. плат.) չենք ուղարկիլ ոչ մի գրավաճառի և ոչ էլ այն արժանապատիւ հայրերին (ազգանուններդ գիտ չենք յիշում) և այն պարոններին, որոնք մեր վստահութիւնն ի չարը գործադրեցին ա. և բ. գրքերի վերաբերութեամբ։
Գումարի միջոցով մեզ դիմողները պէտք է ուղարկեն ճանապարհածախս իւրաքանչիւր գրքին մի-մի 5կոպէկանոց մարկ. (արտասահմանից երկ-երկու 7 կոպէկանոց)։
Հասցէն՝ - Редакція „Норъ-Даръ“ Архидіакону Арутюну Джугурянцъ
5—5

Тифлисъ Дозв. цензурою 8-го Октября 1896 г. Տպարան Ս. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ